

621.396

Ա-51



# ԱՆՈՒԻ ՄԱՐՏԿՈՅԻ ՊԱՏՐԱՍԵԼԸ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄՍՄՈՒՆԻՍՏԻ ԿՈՆԳՐԵՍՍԻ 10 ԿՈՒՐՍՆԵՐԻ ԿՐԹԱՆԻՑ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՈՄՍՄՈՒՆԻՍՏԻ ԿՈՆԳՐԵՍՍԻ 10 ԿՈՒՐՍՆԵՐԻ ԿՐԹԱՆԻՑ

9652PUS

ՅԵՐԵՎԱՆ

04 հունիս 1929



12.02.2013

11877

04 AUG 1951

621.396

Կ-61

այ.

Ելեկտրական կայարաններից հետո՝ խուլ տեղերում ապրող ռադիոսիրողի համար իր ընդունիչի լամպերը սնելու ամենամատչելի և, նույնիսկ կարելի լի ասել, միակ միջոցը լուծույթավոր կամ գալվանական չոր ելեմենտներն են:

Յերբ դուք կամենում եք պատրաստել ինքնաշեն ելոմենտ, այս կամ այն տիպը ընտրելու հարցում պիտի առաջնորդվեք նրանով, թե, նախ՝ տեղում անհրաժեշտ քիմիական նյութերը կարող եք ձարել. բայց, դրանից բացի, մեծ ուշադրություն պիտի դարձնել նաև ելեմենտի կառուցվածքի պարզութան և ելեմենտի ելեկտրական հատկությունների վրա:

Ելեմենտից պահանջվում է՝ վորնրա կառուցվածքը պարզ լինի, լերկրորդ և հետևյալ անգամները կարելի լինի հեշտությամբ լցնել, լերկաբ ժամանակ գործի, աշխատելու ամբողջ անողության ընթացքում հաստատուն լարում ունենա և, ինքնըստինքյան հասկանալի լի, վոր հնարավորին չափ եժան նստի:

1008  
34672

Ստորագրեց ԿՈՐ ԼՊՆՈՐՅԱՆ


Չլավիլիա № 7929 (բ), Պատվեր № 3001, Հրատ. № 2375, Տիրած 3000

ՊԵՏՆՐԱՏՐ ՏՊԱՐԱՆ. ՅԵՐԵՎԱՆ

Հանձնված է արտադրության 20/IX 1932 թ.  
Ստորագրված է ապագրելու 9/XII 1932 թ.  
Ստ. Յ Ե

2 + 1000 4000

Գործնականում ամենից շատ տարածված են  
 Լեկլանշելի թե լուծույթավոր և թե չոր ելեմենտ-  
 ները (մանգանդիլոքսիդով)։ Նրանց պատրաստե-  
 լու մասին տեղեկութուններ արված են «Շի-  
 հացման մարտիցի պատրաստելը» բրոշյուրում  
 (ռադիո գրադարան «Մի կողմի» № 20), բայց  
 նրանց բաղադրության մեջ մտնող մանգանպե-  
 րոքսիդը և նաչատիրը ճարել միշտ հնարավոր  
 չե՛ք բացի դրանից, անողի մարտիցի համար մեծ  
 քանակութլամբ մանր ելեմենտներ պատրաստելը  
 կարող է մեծ դժվարութլուններ ներկայացնել




Նկ. 1.

Այն պատճառով ներկա բրոշյուրում մենք տա-  
 լիս ենք ավելի պարզ ելեմենտներ պատրաստե-  
 ու նկարագիրը, այն է՝ կալույի ելեմենտների  
 նկարագիրը, փորոնց համար անհրաժեշտ նյութեր  
 ճարելն անհամեմատ ավելի հեշտ է։

### ԿԱԼՈՅԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ

Կալույի ելեմենտների կազմութլունը պարզ է,  
 նրանց լեղկորդ անգամ լցնելը հեշտ է, եժան  
 են, աշխատանքի ժամանակ ունենում են հաս-  
 տատուն լարում։ Յիթե քիմիական նյութերը  
 ժամանակին ավելացնեք, նրանք կարող են ծա-  
 դայել մի քանի շաբաթ, նույնիսկ ամիսներ և  
 կարիք չեն ունենա հիմնովին կրկնալիցքի (կըր-  
 կին անգամ լցնելու)։



Նկ. 2.

Նկ. 3.

Կալույի ելեմենտները գործ են անում անողի  
 մարտիցների համար։ Նրանց պատրաստելու հա-  
 մար վերցնում են ապակե մի փոքր բաժակ, կամ,  
 ավելի լավ է, ղեղազործական մի փորձանակ,

վորի տրամագիծը լինի 25—30 կամ ավելի միլիմետր, իսկ բարձրութունը՝ 70—80 մմ: Փորձանակի հատակում դնում են մի տափակ սպիրալ (գալար), վոր պատրաստում են 0,8—1,5 մմ տրամագիծ ունեցող պղնձե մերկ լարից: Այդ լարային գալարի մի ծայրը (նշանակութունն չունի՝ արտաքին թե ներքին ծայրը) հանում են վեր՝ փորձանակից դուրս, ինչպես կարելի չե տեսնե՛լ 1 և 3 նկարներում, բայց գալարի այդ վեր բարձրացող ծայրը պետք է լավ մեկուսացնել՝ պատելով խեժով կամ ասֆալտի լակով, կամ, ավելի լավ է, հազցնել արդ լարի վրա ռետինե մի նեղ խողովակ:

Փորձանակի վերի մասում կախում են մեկ ցինկի շերտ կամ ձող կամ կիսազլան, պետք է աշխատել, վոր ցինկն ունենա, հնարավորին չափ մեծ մակերևութի:

Ցինկը կարելի չե կախել կամ անոթի յեզրին, ինչպես ցույց է տրված նկ. 1-ում, կամ կարելի չե անոթի բերանի վրա մի փայտ դնել և ցինկը կախել նրանից:

Ցինկի ստորին յեզրը պղնձալարի գալարից մոտ 25—30 մմ. պետք է վերև լինի. ցանկալի չե (թեև պարտադիր չե), վոր ցինկն ամալգամած լինի, այսինքն. ծածկված լինի փոքրիկով:


Ամալգամելը կատարում են այսպես. մի սաղրիկ (ծանծաղ) ափսեյի մեջ ածում են շատ քիչ քանակությամբ ծծմբաթթվի կամ աղաթթվի լուծույթ այն հարաբերությամբ, վոր 10 ծավալ շրին ավելացված լինի մոտ 1 ծավալ թթու: Ցինկի շերտը դնում են այդ լուծույթի մեջ և վորևե շորի մի կտորով կամ մահուղով ցինկի մակերևութը պուտում (շփում) են, ապա վրան կաթեցնում են մի կաթիլ սնդիկ ու արորում են նույն մահուղով. մահուղը թացացնելով թթվի լուծույթով, սնդիկը պուտում են ցինկի ամբողջ մակերևութին, բացի վերևի ծած մասից: Ամալգամելուց հետո ցինկը դառնում է շատ փրկորուն, ուստի նրան այլևս չի կարելի ճկեր:

Ցինկին զողում են պղնձե հաղորդիչ, վորից հետո արդեն նա ծառայում է վորպես ելեմենտի բացասական բևեռ (մինուս), իսկ պղնձալարի գալարը՝ վորպես դրական բևեռ (պլյուս):

Ելեմենտը հավաքելուց հետո փորձանակը լքանում են 10<sup>0</sup>/<sub>0</sub>-անոց գլաուբերյան աղի լուծույթով կամ նույն թնդության սովորական աղի լուծույթով, և փորձանակի մեջ գցում են՝ մոտ 5—10 կտոր ափսեռի մեծության պղնձարջասպի բյուրեղներ այնպես, վոր այդ բյուրեղներն ընկնում են պղնձալարի գալարի վրա: Հեղուկը պետք չե վոչ թափ տալ, վոչ էլ խառնել:

Մի քանի բույսերից հետո պղնձաբլասպը լուծվում է, և հեղուկի ստորին մասը թունդ կապույտ գույն է բռնում, այնինչ նրա վերին մասը, փորտեղ տեղափոխված է գինյը, մնում է սպիտակ, թափանցիկ:

Իրանից հետո, ելեմենտի եներգիան լիովին վերականգնելու հպատակով, 10—15 րոպե ժամանակով ելեմենտի մեջ կարճ միացում են առաջ բերում՝ պղնձալարով միացնելով նրա զրահան բեռը բացասականի հետ: Իրանից հետո ելեմենտն արդեն կարող է զօրծ անվել:



Նկ. 4.

Բայց ելեմենտն առանց կարճ միացումի ել կարող է միանգամից հատարելու իր լրիվ զօրծողությունը, լեթե լուծույթի թափանցիկ մասին անլեպաններ 3—5 կաթիլ գտած ձմրաթթու:

Կալուրի ելեմենտի լարումը, անտիս նրա մեծութունից, կազմում է գրեթե 2 վոլտ, բայց աշխատանքի ժամանակ, նախած ձախափող հոսանքի ուժին, նա քիչ պակասում է մատուցելու մինչև 0,9—0,8 վոլտի, և արդ լարումի վրա մնում է աշխատանքի անբողջ ժամանակ:

Յիշյալ ելեմենտների գլխավոր արժանիքը եննց այն է, վեր աշխատանքի ժամանակ նրանք պահպանում են հաստատուն լարում:

Բայց առ ի ելեմենտների ներքին զիմադրությունը խոշոր է, և այնքան ավելի մեծ է լինում, փոքրան փոքր է ելեմենտը. դրա հետևանքով էլ Կալուրի ելեմենտներն ընդհանրապես տալիս են, համեմատաբար փոքր հոսանքի ուժ: Վերը ցույց տված ջափսերի ելեմենտը կարող է տալ ընդամենը մի քանի տասնյակ միլիամպեր, փոք, ինտրկե, միանգամայն բավարար է մի քանի լամպի անողներ սնելու համար:

**ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՄԻՍՅՈՒՄԸ**

Անողի ստորական 80 v լարում ստանալու համար նշած ախի (Կալուրի) ելեմենտներից պետք է կազմել մարտից, վորի համար միացնում են հաջորդաբար, արխնքն նրանց մի ելեմենտի ցինկը միացնում են լեկրոտը է:

լեմենտի պղնձե զալարին, լերկորդի ցինկը՝ լեր-  
բորդի զալարին և ալյն (նկ. 4):

Այս լեղանակով կազմած մարտկոցի լարումը  
հավասար է լինում բոլոր ելեմենտների լարում-  
ների գումարին:

Մի ելեմենտի միջին աշխատող լարումը հաշ-  
վելով մոտ 0,9 վոլտ, 80 վոլտ ստանալու հա-  
մար մարտկոցը պետք է կազմել մոտ 90 ելե-  
մենտից: Իսկ լեթե հոսանքի ավելի մեծ ծախք  
եք ունենալու, որինակ, լեթե պիտի սնեք 4—5  
լամպ, ավելի լավ է վերցնել 95—100 ելեմենտ:

### ՄԱՐՏԿՈՑԻ ՀԱՎԱՔԵԼԸ

Ելեմենտներից մարտկոց հավաքելու համար  
ալյապես են վարվում: Վերցնում են համապա-  
ասխան չափսերի մի սաղրիկ արկղ, կամ պար-  
զապես, մի հասարակ տախտակ, վորի լեզրերին  
խփում են համապատասխան բարձրության կա-  
վարներ (ռեյկաներ):


Դրանից հետո, բոլոր ելեմենտները դարսում  
են արկղի մեջ միջանի շարք՝ նրանց արանքնե-  
րում թողնելով փոքր տարածություններ  
սրինակի, 5 մմ. և նրանց միացնում են իրար հետ՝  
հաջորդաբար (նկ. 5):

Ապա արկղի հատակի վրա ելեմենտների տ-  
րանքը լցնում են խեժ կամ լեփ (var), պարա-

ֆին և ալյն, մոտ 10 մմ. հաստության շերտով,  
և թողնում են, վոր սառի:

Շնորհիվ այդ հարվածքի, բոլոր ելեմենտները  
կպչում են արկղի հատակին, ալյես նրանք շու-  
շեն գա, ու անդից չեն սահի:

Մարտկոցի ծալրային Ձ ելեմենտների ազատ  
բևեռները միացնում են արկղի պատի մեջ հազց-  
րած սեղմակներին: սրանով վերջանում է մարտ-  
կոցի հավաքելը:



նկ. 5.

### ՄԱՐՏԿՈՑԻՆ ՀՈԳ՝ ՏԱՆԵԼԸ

Մարտկոցից ոգավելիս գլխավոր ուշադրու-  
թունը պետք է դարձնել այն բանի վրա, վոր  
ելեմենտների մեջ բավարար քանակությամբ լու-  
ծուլթ լինի:

Լուծուլթի գոյորշխանարու ղեպքում ելեմնան-  
ների մեջ պետք է մաքուր լեռացրած ջուր ա-  
վելացնել. այդ ավելացումը պետք է կատարել  
շատ զգուշ: ամենին թափ շատ ցածում գրա-  
նըփող պղնձարջասպի (կապույտ) լուծուլթը:

Վերջինիս մակերևույթը միշտ պետք է գանձի  
մոտավորապես, պղնձարարի գալաքի մակերևույ-  
թի և ցինկի ստորին լեզրի միջև գանձի սա-  
րածուլթյան մեջտեղում: Բաց վարպետահ աշ-  
խատելու ժամանակ պղնձարջասպի լուծուլթից  
մաքուր պղինձն արտադրվում է ու նստում  
պղնձարարի գալաքի վրա, և դրանից կապույտ  
լուծուլթի քանակը փորձանում է, ուստի, այս  
գեպքում, հարկավոր է ելեմնաների մեջ զցել  
պղնձարջասպի միջանի փոքր կտորներ:

Յեթե մարտկոցից ոգավում էք պարբե-  
րաբար և կանոնավոր, ավելի լավ կլինի պղնձ-  
արջասպի բյուրեղների ավելցումն էլ կատարել  
ժամանակի վորոշ միջոցներից հետո և փորոշ  
քանակուլթյամբ, մի բան, վոր հեշտուլթյամբ կա-  
րելի չե լեզրակացնել փորձից:

Բաց միաժամանակ պետք է հետեել նաև, վոր  
պղնձարջասպի լուծուլթը վոչ մի դեպքում չհաս-  
նի ցինկին, հակառակ դեպքում՝ ցինկի վրա  
կնստեն կեղտոտ փրթուկներ, վորոնք կեղտոտում  
են ելեմնար:

Բաց լեթե այդ առաջ գա պղնձարջասպի բյու-  
րեղների առատուլթյունից, պետք է ելեմնանե-  
րն ուժգին բաժնցնել, թեկուզ նույնիսկ կարճ  
միացում առաջ բերելով, մինչև վոր կապույտ  
լուծուլթի մակերևուր ցածրանա:

Հեղուկի վերին թափանցիկ մասում արտա-  
դրվող ծծմբաթթուն ազդում է ցինկի վրա, և  
ցինկը հետզհետե լուծվում է, վորի շնորհիվ, վե-  
րևում արդեն ցինկարջասպի լուծուլթ է գոյանում:

Ժամանակի լեթացքում այս լուծուլթն ավելի  
ու ավելի չե թանձրանում և, դրա շնորհիվ, ցինկի  
վրա ու փորձանակի լեզրերին առատորեն նըս-  
տում են բյուրեղներ:

Այս դեպքում թափանցիկ լուծուլթի մի մասը  
պետք է զգուշուլթյամբ վերցնել, ու փոխարենն  
ավելացնել գամ ջուր, կամ աղի լուծուլթ, վրան  
ավելացնելով միջանի կաթիլ ծծմբաթթու:

Վորպեսզի ազերը փորձանակների պատերի  
վրայով ցած չիջնեն, փորձանակների լեզրերը  
նույնպես և ելեմնաներն իրար հետ միացնող  
հաղորդիչները պետք է ոժել վազելինով, կամ  
ճրագվով, կամ, ավելի լավ է, պատել պարաֆինով:

ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԱՆԳՍՄ ԼՅՆԵԼԸ

Յեթե Կալուրի ելեմնաների մեջ ժամանակին  
ավելացնեք պղնձարջասպի բյուրեղներ, այդ է-


լեմենտները, ինչպես ասվեց, կարող են ծառայել լերկար շաբաթներ, նույնիսկ ամիսներ՝ առանց լերկրորդ անգամ հիմնովին լցնելու:

Սակայն շնորհիվ այն բանի, վոր լուծույթն ազդում է ցինկի վրա, վերջինս ժամանակի ընթացքում քայքայվում է և պետք է լինում նրա տեղ նոր ցինկ դնել:

Դրական բևեռը, այսինքն՝ պղնձալարի գալարն ամենևին կարիք չկա փոխելու, վորովհետև նա չի ծախսվում, ընդհակառակն, նրա վրա աճում է մաքուր պղնձի քանակը. ելեմենտի լերկար աշխատանքից հետո, գալարի վրայից այդ մաքուր պղինձը կարելի է հեռացնել:

Ինքնըստինքյան հասկանալի է, վոր լերք լուծույթները չափազանց կեղտոտվել են, պետք է նրանց փոխարինել նոր լուծույթներով. սրանումն էլ հենց կայանում է ելեմենտների լերկրորդ անգամ լցնելը:

Փոշուց պահելու և ուժեղ գոլորշիացման առաջն առնելու համար, ամենից նպատակահարմարն այն է, վոր մարտկոցները պահեն փակ արկղում, կամ բոլոր ելեմենտներն էլ ծածկոցներ ունենան:



« Ազգային գրադարան



NL0276360

11877